

չ'ըսեր, թէ ուրկէ՛ գացած է հոն կամ ո՛րքան մնացած է. կը գոհանայ միայն ըսելով, թէ ուզած է երթալ Հապէշիստան և 17 Սեպտ. 1678ին ճամբայ ելած է Գահիրէէն և 8 օր նեղոսի վրայ նաւարկելով հասած է Գիրնէ, որ է Կիրքե (Girgè կամ Guerga) քաղաքը, որուն մասին եւս ոչ մէկ տեղեկութիւն կուտայ: Հ. Ստեփաննոս Գիւլէր Ագոնց իր Աւսարհագրութիւն Զորից Մասանց Աւսարհի գործին մէջ (Գ. մաս. 1802. Վենետիկ), որ Յովհաննէս Թիւթիւնճիի ուղեւորութենէն մտաւորապէս 120 տարի վերջը գրուած է և մեզմէ 140 տարի առաջ, կը պարունակէ բաւական ընդարձակ ծանօթութիւններ այս քաղաքի մասին, որ ԺԹ. դարուն սկիզբը կեդրոնն էր Վերին Եգիպտոսի և աթոռանիստը՝ անոր իշխանին: Ծիրնէ կամ ձերնէ ըստ Ագոնցի բազմամարդ քաղաք մըն էր նեղոսի արեւմտեան ափին վրայ, իբր մէկ մզոն հեռու անկէ, գրեթէ նահանգին կեդրոնը:

Բնակիչներուն թիւը այն տառն կը հաշուուէր իբր թէ 27,000, որոնցմէ 3,500ը զպտի. կային նաև քիչ թիւով հրեաներ: Ըստ Baedekerի 1914ին այդ թիւն էր 19893, որոնց 5143ը զպտի:

Քաղաքը ունէր եօթը մեծ մզիթներ և ութը մեծ «վաճառանոց»ներ կամ «որգոստա»ներ (=չուկայ), որ էր Թուրքերու պեղեսպէն կոչածը՝ ըստ Ագոնցի: Գլխաւոր բերքերն էին ցորեն, ոսպ, բակլա, սար, կաւա և տեսակ մը իւղաբեր հունտ, զոր զաստ կը կոչէին: Ըստ Ագոնցի՝ հոն կը հասնէր նաև խաղող (Օգոստոսին), բայց որթատունկին վրայ կը մնար մինչև Յունուար և չէր փտեր: Անկէ պատրաստուած գինին ընտիր չէր ո՛չ թէ խաղողի գէշ որակին համար, այլ վասնզի բնիկները չէին գիտեր պատրաստութեան եղանակը: Սննդեղէնք անձաւատալի կեր...